ՄԵԾԱԳՈՐԾ ԲԱՐԵՐԱՐԻ ԱՃՅՈՒՆԱՏՈՒՓԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 29-ին, դեռևս ս. պատարագը չսկսած, լեփ-լեցուն էր Ս. Գայանե եկեղեցին: Ներկաները լուռ էին ու տխուր. եկեղեցու Ս. Սեղանի դիմաց, բեմի վրա, դրված էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մեծագործ բարերար, սփյուռքահայ ազգային-հասարակական գործիչ Սարգիս Քյուրքճյանի աճյունատուփը՝ բերված հեռավոր Լոնդոնից:

Շուտով սկսվեց ս. պատարագը՝ համատեղ երգակցությամբ Ս. Գայանե եկեղեցու և Սան Ֆրանցիսկոյից հյուրաբար ՍՍՀՄ-ում գտնվող «Սլավյանկա» երգչախմբերի: Պատարագիչն էր Ամերիկայի հայոց արևելյան թեմից ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Գառնիկ քհն. Հալաճյանը: Պատարագին ներկա էին Վեհափառ Հայրապետը, Կ. Պոլսի Պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը, Հայ Եկեղեցու արտասահմանյան ու ներքին թեմերի առաջնորդ սրբազան հայրեր, արտասահմանից ժամանած հյուրեր և բազմաթիվ հավատացյալներ:

Աճյունատուփը Մայր Հայրենիք էր տեղափոխել Սարգիս Քյուրքճյանի ավագ որդին՝ Գևորգ Քյուրքճյանը:

Հավարտ ս. պատարագի, հոգևորականներից ու հավատացյալներից բաղկացած թափորով, հոգևոր երգեցողությամբ և առաջնորդությամբ Վեհափառ Հայրապետի, աճյունատուփը տեղափոխվեց Ս. Գայանե եկեղեցու հյուսիսակողմում գտնվող գերեզմանատուն: Թաղման հանդիսավոր կարգը կատարելուց հետո, հանգուցյալի ազգաշեն գործունեության ու ապրած օրինակելի կյանքի մասին սրտառուչ խոսք ասաց Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

Մենք բոլորս հուզված ենք այս պահին: Հուզված, որովհետև այս սուրբ հողին, Գայանեի վանքի այս սուրբ հողին հանձնեցինք աճյունը Մայր Աթոռի մեծանուն բարերարներից մեկի՝ Սարգիս Նալարեթի Քյուրքճյանի, որի որդին իմ կողքին է կանգնած, որ կրում է իր մեծ հոր անունը՝ Գևորգ Քյուրքճյան: Այժմ բնակվում են նրանք՝ ինք և իր եղբայրը և ամբողջ ընտանիքը,



Վեհափառը Հայրապետը դրսևորում է յուրահատուկ ոգեշնչում Աստված ուրախությունից Ծաղկալանջ տարիքի կնայելիքներ

Անգլիայում, Լոնդոն քաղաքում: Ե՛վ Գևորգը, և՛ իր եղբայրը՝ Հովհաննեսը, ուխտ կատարեցին, որպեսզի իրենց հոր աճյունը բերվի Մայր Հայրենիք և հայրենի հողին հանձնվի: Մենք ահա այս հուզիչ պարտականությունը կատարեցինք այս պահին: «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»,—արդարների հիշատակը թող օրհնությամբ լինի:

Այս պահը թեև խորապես հուզիչ և տխուր է, սակայն նաև մխիթարիչ է իմ կարծիքով: Իրոք մխիթարվում ենք մենք բոլորս նախ քրիստոնեական մեծ հույսով, որ մարդկանց հոգիները արժանանալու են հավիտենական կյանքի: Հավիտենական կյանքի հույսը, այո՛, մեզ մխիթարում է: Բայց նաև այս վայրը, որտեղ մենք կատարեցինք թաղման արարողությունը Կոմիտասյան սուրբ պատարագով, այս պատմական եկեղեցին, Սուրբ Գայանեի գերեզմանի վրա, նույնպես մխիթարում են մեր սրտերը: Ահավասիկ, թե ինչու մենք այս պահին թե՛ տխուր ենք և թե՛ մխիթարված:

Սարգիս Քյուրքճյան իր ողջ կյանքով նվիրված էր մեր Սուրբ Եկեղեցուն, իր ընտանիքին և մեր ժողովրդին ու հայրենիքին: Նրա համար ողջ աշխարհում չկար ավելի մեծ սրբություն, քան Սուրբ Էջմիածինը, իբրև բավմադարյան կենտրոն Հայաստանյայց Եկեղեցու, խարսխված հայրենի հողի վրա և օրհնված Ս. Գրիգոր Լուսավորչի աջով: Կարծում եմ, Սարգիս Քյուրքճյանի ամբողջ կյանքը դրոշմված էր այս հավատով, այս նվիրումով: Եվ նա ապրեց բավական երկար տարիներ, 85 տարեկանին իր աչքերը փակեց: Փոքր հասակից նա ծառայել է եկեղեցուն, մասնակցելով սրբազան արարողություններին իբրև դպիր: Նվիրված էր նաև իր ընտանիքին, իբրև առաքինի ամուսին և հայր: Իր երկու զավակները, թեև Լոնդոն ծնած և մեծացած և ուսում ստացած Անգլիական վարժարաններում, սակայն նա դաստիարակել է նրանց ոչ միայն քրիստոնեական ոգով, բայց նաև նրանց փոխանցել էր մեր հայրերի ավանդությունները, առաջին հերթին մեր Մայրենի լեզուն: Նրանք՝ երկու զավակներն էլ, թեև երբեք առիթը չեն ունեցել որևէ հայկական վարժարան հաճախելու, բայց կատարելապես հայերեն են խոսում և կարդում և ապրում են հեռավոր Անգլիայում ճիշտ այնպես գրեթե, ինչպես հայերը իրենց Մայր Հայրենիքում: Ահավասիկ, այս բոլորի վրա պետք է ավելացնեմ նաև Քյուրքճյան ընտանիքի բարեսիրտ և հոգատար վերաբերմունքը Մայր Աթոռի հանդեպ: Ես գումարների մասին չեմ խոսում՝ մեծագումար նվիրատվություններ կատարեցին նրանք և շարունակում են կատարել, սակայն ոչ միայն նյութական նվիրաբերումն էր իմ կարծիքով հատկանշական հանգուցյալ Սարգիս Քյուրքճյանի համար, այլ նաև իր հոգու նվիրումը, նյութական իր միջոցները տալու կերպը՝ սրտանց, սրտաբուխ, առանց որ ես կամ ուրիշ մեկը նրան հուշեր այդ մասին: Ահավասիկ, այսպիսի վաստակով նա հեռացավ կյանքից և արժանի է Աստծո ողորմության և երկնքի արքայության: Այս առիթով մի անգամ ևս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անունից իմ վշտակցությունն եմ ներկայացնում Քյուրքճյան ընտանիքին՝ այրև տիկին Աստղիկին, Գևորգին, Հովհաննեսին և ընտանեկան բոլոր պարագաներին: Աղոթում եմ տիկին Աստղիկ մայրիկին քաջառողջ կյանք, հույսով, որ հառաջիկա տարի նա կըկարողանա գալ այստեղ և աղոթել հանգուցյալ իր ամուսնու գերեզմանի առաջ:

Սիրելի Գևորգ, Ձեզ և Ձեր եղբորը մաղթում ենք կենաց անհատնում տարիներ, որպեսզի շարունակեք ապրել և գործել Ձեր ծնողաց լույս ճանապարհով, լուսեղեն ճանապարհով, միշտ հավատարիմ մնալով նրանց երազանքներին, նրանց ուխտին, նրանց սիրույն դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Վերադարձին Ձեր ընտանեկան պարագաներին պատմեցեք այս-

օրվա, այս հրաշալի օրվա մասին: Եվ կարծում եմ, նրանք էլ պիտի մխիթարվեն, ինչպես մենք այսօր:

Թող Աստված հավիտյան լուսավոր պահի Սարգիս Քյուրքճյանի հիշատակը այնտեղ՝ երկնքում, և այստեղ՝ երկրի վրա, այժմ և հավիտյան, ամեն:

Այնուհետև ներկաները համախմբվեցին Տիրամոր՝ Սիրանույշ Պալճյանի գերեզմանի շուրջ, ուր նույնպես հոգեհանգստյան կարգ կատարվեց:

Արարողությունների ավարտից հետո Ս. Գայանե եկեղեցում անգլերեն, ռուսերեն ու հայերեն լեզուներով հոգևոր երգերի բարձրարվեստ կատարմամբ հանդես եկավ «Սլավյանկա» երգչախումբը՝ մեծ տպավորություն գործելով ներկաների վրա:

Վերջում Վեհափառ Հայրապետը քաջալերական խոսքեր ասաց երգչախմբի անդամներին՝ կատարողական բարձր արվեստի համար:

Այնուհետև Մայր Աթոռի սեղանատանը տրվեց հոգեճաշ: Հոգեճաշին Վեհափառ Հայրապետը, Կ. Պոլսի Պատրիարք Ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը և Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը մի անգամ ևս հանգուցյալին մաղթեցին հոգու խաղաղություն, վերհիշելով Սարգիս Քյուրքճյանի կյանքից անմոռաց դրվագներ, հույս հայտնելով, որ Մեծ մարդու, մեծագործ բարերարի ու ազգասերի պայծառ հիշատակը միշտ կմնա Հայ Եկեղեցու երախտավորների շարքում:

«Երանեալ են անբիծք ի ճանապարհի, և ոյք գնան յօրէնս Տեառն»:

ԳԵՎՈՐԳ ՍՐԿ. ՄԿՐՏՉՅԱՆ